## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5*

№ ԴԴ-3-Հ-503

«01» փետրվարի 2014 թ.

**«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից

Հայտնում ենք, որ www.armeps.am կայքում (այսուհետ՝ կայք) 29.01.2014թ. տեղադրված «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «ԴԴ-ԾՀԾՁԲ-11/14» ծածկագրով թարգմանության ծառայությունների գնման հրավերում կատարվել են փոփոխություններ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ԾՀԾՁԲ-11/14»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել կայքի միջոցով ոչ ուշ քան 2014թ. փետրվարի 12-ը, ժամը 9:30-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժնի պետ Գ. Ներսիսյանը (հեռ. 010 511 788, 010 511 787 ):

Հայտերը կբացվեն 2014թ. փետրվարի 12-ին, ժամը 9:30-ին կայքի միջոցով:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ թարգմանության ծառայությունների (որոնք կազմված են 41 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝ ԻՇԽԱՆ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ՝. Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 511-788, 511-787